«Տեղեկագիր հարստահարութեանց» Օսմանյան կայսրության հայաբնակ գավառների վերաբերյալ

Գինոսյան Ն. Լ.
ԵՊՀ, Թյուրքագիտության ամբիոն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
naira.ginosyan@ysu.am

Վճռորոշ բառեր՝ Արևմտահայություն, Օսմանյան կայսրություն, անօրինականություն, մահմեդական տարրեր, դավանափոխություն, հարկատեսակներ, կոտորած:

Ведомость об угнетенном положении западных армян и о насилии и бесчинствах, которым они подвергались в Османской империи

Гиносян Н. Л.
ЕГУ, Кафедра тюркологии, к.,и.,н., доцент
Институт истории НАН РА (Ереван, Армения)
naira.ginosyan@ysu.am

Аннотация: При поддержке османских властей, курдские аширеты, черкесы, другие мусульманские элементы заселяли армянские районы и насильственно лишали армян собственных земель. Действовавшие законы шариата не давали армянам гарантий безопасности личности и неприкосновенности имущества. Они были лишены права свидетельствовать в суде, носить оружие, что делало их совершенно беззащитными, религиозные преследования и насильственная исламизация сопровождали их в течение всей жизни.
В данной публикации приводится письмо викария церкви святого Карапета в Муше Вардана Акопяна, адресованное британскому послу в Багеше (Битлис), о бесчинствах, которые творились в вилайетах, заселенных армянами, о всевозможных незаконных налогах, взимаемых с населения, о рабском положении земледельцев, о беззакониях, имевших место в судебной сфере. Он обращается к европейским державам с просьбой взять их под свою защиту и провести необходимые реформы.
Ключевые слова: Западные армяне, Османская империя, беззакония, мусульманские элементы, насильственная исламизация, налогообложение, резня.

Notice about the deprecated situation of western Armenians, about violence and depredations which they were exposed to in the Ottoman empire

Ginosyan N. L.
YSU, Faculty of Oriental Studies,
Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)
naira.ginosyan@ysu.am

Abstract: With the support of the Ottoman authorities, Kurdish Ashyrets, Circassians, and other Muslim representatives, settled in the Armenian regions and forcibly deprived the Armenians of their own lands. The existing Sharia laws did not give the Armenians any guarantees of personal security and inviolability of their own property. They were deprived of the right to testify in court, to carry weapons, which made them completely defenseless, religious persecution and violent Islamization accompanied them throughout their lives.

This publication contains a letter from the vicar of the church of St. Karapet in Mush, Vardan Hakobyan, addressed to the British ambassador in Baghesh (Bitlis), about the lawlessness and atrocities that occurred in vilayets settled by Armenians, about all kinds of illegal taxes levied from the population, about the slave position of farmers and about the illegality that took place in the judicial sphere. He calls on the European powers to take them under their protection and carry out the necessary reforms.
Keywords: Western Armenians, Ottoman Empire, illegality, Muslim elements, forcible islamization, taxation, massacre.

Օսմանյան կայսրությունը XX դարի սկզբին հետամնաց, բռնապետական, կայսրության տարբեր ազգերի մասսայական ջարդեր կազմակերպող երկիր էր: Բոլորովին իրականությանը չի համապատասխանում թուրք պատմաբանների այն հայտարարությունները, թե «Թուրքերը ոչ մի ժամանակ որևէ ազգի նկատմամբ բռնություն չեն գործադրել: Ոչ մի ժամանակ թուրք տիրակալները հպատակ ազգերին չեն պարտադրել իրենց կրոնը», կամ

իբր թանզիմաթի շրջանում «Կյանքը Օսմանյան կայսրությունում բարելավված էր: Հատկապես փոփոխություն էր նկատվում օրենքի և ընդհանուր ապահովության ասպարեզում: Ունեցվածքի կամայական բռնագրավումները, դատարաններում բռնի կերպով խոստովանեցնելու համար կիրառված տանջանքներն անցյալի գիրկն էին գնացել: Քրիստոնյաները օրենքի առջև արդեն իրավահավասար էին մահմեդականների հետ և նրանց վկայությունները ընդունվում էին որոշ դատարաններում» [**1**, էջ 65]: Սակայն պատմական աղբյուրները և ժամանակակիցների վկայությունները հակառակն են ապացուցում: Հայերը մշտապես ենթարկվում էին բռնությունների ու հարստահարությունների: «Թուրքաց մոլեռանդութիւնը և աներողութիւնն այնչափ է, որ կրնան հայ մը ձիէն վար առնել, շուկայի և փողոցներու մէջ անտեղի պատճառով մը, կամ, ի՞նչ պէտք է պատճառ. Մի՞թէ հայ լինելը բաւական պատճառ չէ՞, կը քաշեն, կը զանակոծեն: Եթե թուրք մը բան գնած է հայէ մը, իրաւունք չունի հայն ստակ պահանջելու, եթէ վճարէ թուրքն՝ շնորհ մէ, եթէ ոչ՝ իւր իրաւունքն է» [**2**, էջ 162-163]: Թուրքերի կիրառած դաժանությունը պատահական չէր, այլ հատուկ և տևական: Նրանց իրավական համակարգը իր էությամբ անարդար էր քրիստոնյա հպատակների հանդեպ: Մահմեդականը կարող էր առևանգել, թալանել, սպանել քրիստոնյային և մնալ անպատիժ: Քրիստոնյաների և մահմեդականների միջև եղած կրոնական խտրականությունը գնալով խորացավ և բացահայտորեն դարձավ Օսմանյան կայսրության վարած քաղաքականության հենքը: Քրդերից կազմված «համիդիե» անկանոն զորագնդերը, քաղաքային ու զինվորական իշխանությունների հրահանգներով հարձակվում էին գյուղերի վրա՝ այրում, հալածում ու կոտորում հայ բնակչությանը [**3**, էջ 7]: Գյուղ մտած քրդական խմբերը և այլ մահմեդական տարրերը վերցնում էին ինչ որ ցանկանային, ոմանք էլ օրենքից դուրս հարկեր հավաքում բնակչությունից: Հարկահավաքները նշանակածից ավելի ոչխարի հարկ և աշար[1] էին գանձում: Գավառների ծանր վիճակի մասին բողոքագրեր էին գրվում պատրիարքարան, օտարերկրյա դեսպաններին, հյուպատոսությունների ներկայացուցիչներին: Ստորև հրապարակում ենք Կինճի (Կինճ- գավառ Արևմտյան Հայաստանում, Բիթլիսի նահանգում) [**4**, էջ 140] առաջնորդական տեղապահ և Մուշի Ս. Կարապետ եկեղեցու վանահայրական փոխանորդ Վարդան Վարդապետ Հակոբյանի կազմած տեղեկագրերը Օսմանյան կայսրությունում հայերի հարկման, հարստահարման և կրոնափոխության վերաբերյալ: Այս տեղեկագրերը հասցեագրված են Բաղեշում գտնվող Մեծ Բրիտանիայի հյուպատոսին: Այդ ժամանակ Ա. Սաֆրաստյանն աշխատել է Բաղեշի բրիտանական հյուպատոսարանում որպես թարգմանիչ:

Այս տեղեկագրում թվարկվում են հարստահարության այն ձևերը և միջոցները, որոնց ենթարկվում էր հայ բնակչությունը՝ հողային կալվածքների գրավումը, երկրագործի ստըրկացած վիճակը, գյուղի աղային կամ քուրդ բեյին պարտավորված ծառայելը, հարկերի տեսակները, զեղծ հարկահավաքները, այն անօրինականությունները, որոնք կատարվում էին հարկերի նշանակման և գանձման ընթացքում, զեղծումներ կիրառված կառավարական պաշտոնյաների կողմից, երեխաների և կանանց առևանգում և բռնաբարում, բռնի մահմեդականացում: Նկարագրվում է բանտերի վիճակը, այն տանջանքները, որոնց ենթարկվում էին հայերը [**5**, էջ 7 շրջ.]: Այս ամենը սքողելու նպատակով կեղծ հանրագրություններ էին պատրաստում և բռնի կերպով ստիպում պաշտոնական մարմիններին ներկայացնել ուր որ պետք է և հրատարակել, թե «Երկիրը խաղաղ և անդորր է» [**5**]:

Տեղեկագրի մեջ խնդրում են, որ անհրաժեշտ բարեփոխումներ կատարվեն հարկման մեջ, վերանան տասնորդական և զինվորական տուրքերը (վերջինի փոխարեն միլիցիայի հաստատում), զինաթափ արվեն ոչ զինվորական իսլամ տարրերը, մանավանդ՝ քուրդ աշիրեթները[2], հայերից գրավված հողերի վերադարձ, բարեփոխումներ դատական ոլորտում, եվրոպական պետությունների հսկողություն հայաբնակ գավառներում և այլն [**5**, էջ 11 շրջ.]: Սրա հետ մեկտեղ պետք է նշել, որ հայերը փորձում էին լուծել այս հարցերը Օսմանյան կայսրության շրջանակներում, երբեէ չի դրվել հարց նրանից անջատվելու կամ առանձին անկախ պետություն ստեղծելու մասին [**5**]: Նրանք բարեփոխումներ ու բարեկարգումներ էին պահանջում, անձի անվտանգություն, իրավունքի և ունեցվածքի անձեռնմխելիություն: Սակայն գործող օրենքները և շարիաթի նորմերը չէին կարող ապահովել հայերին նման երաշխիքներով:

Սույն փաստաթուղթը հայտնաբերել ենք Հայաստանի ազգային արխիվում (ֆ. 412, ց. 1, գ. 1857): Կատարել ենք ուղղագրական և կետադրական որոշ շտկումներ: Անձնանուններն ու տեղանունները դարձրել ենք մեծատառ, իսկ դրանց մի մասը՝ միատեսակ: Անտեսել ենք ապաթարցի նշանը:

[1] Աշար (թրք. âşar)-տասնորդական տուրք:

[2] Աշիրեթ (թրք. aşiret)-քոչվոր ցեղ:

1904 թ. մայիս 15/28 Ս. Կարապետ Մշոյ

Նորին վսեմութեան
Մեծին Բրիտանիոյ
Բաղեշի հիուպատոսին
ի Մուշ

Վսեմ Տէր

Նամակիս հետ կից կը գտնէ Ձեր վսեմութիւնը հայերու հարստահարութեանց և Սասունի արդի կոտորածի տեղեկագիրն անհրաժեշտ նկատուած բարենորոգումներու ծրագրովն:

Կը խնդրուի Ձեր վսեմութենէն որ բարեհաճիք հաջողութեամբ առնուլ զայն և Ձեր մեծազօր Պետութեան ներկայացնելով գրութիւն հայցիլ այս տարաբախտ ազգին վրայ որոյ կեանքն ու ստացուածքը վտանգի մեջ են, հակառակ Պերլինի վեհաժողովին 61ՈՒ (61-րդ) յօդուածի տրամադրութեան

Ընդունիլ հաճեցէք Վսեմ Տեր մեր
յարգանքներեն
մնամ Աղօթարար
Առաջնորդական Տեղապահ
Կինճի և վանահայրական
Փոխանորդ Ս. Կարապետի Մշոյ
Վարդան Վարդապետ
Յակոբեան

Տեղեկագիր հարստահարութեանց

Հայաբնակ գաւառներու մէջ Հայերը զանազան ուղղակի կամ անուղղակի միջոցներով կը հարստահարուին տիրող տարրին կողմանէ ուստի բողոքելով մեր նպատակը չէ քաղաքական անջատում Տաճկաստանի և ոչ ալ գերիշխան ըլլալու ձգտում ուրիշ ցեղերու վրայ, այլ բարենորոգումներ ու բարեկարգութիւններ պահանջելու, որպեսզի ապահովուած լինեն հայերու բռնաբարուած աշխատանքը, ինչքը, իրաւունքը պատկան ու կեանքը կը պահանջենք ազատութեան ներկայ ստրկական վիճակեն և կատարելապէս հաւասար ճանչուիլ ուրիշներուն նման:

Թուենք այժմ հարստահարութեանց այն ձևերն ու միջոցներն, որոնք ցարդ սպառնացած են մեր գոյութեան և որք իրենց թափը չեն տկարացուցած դեռ հիմայ ալ:

<u>Հողային կալուածներու գրաւում</u> Գաւառաբնակ հայեր առ հասարակ հողագործ և հողատէր են եղած սկզբէն ի վեր, իսկ թուրքեր կամ քիւրտեր որոնք 40-50 տարիներ յառաջ շատ քիչ հող ունեցած էն, հետզհետէ բռնի միջոցներով կամ չնչին գումարի մը տոկոսներու բարձումներով գրաւած են հայերու հողերը. դժբաղտաբար օրենքը չի պաշտպանուած հայուն բռնաբարուած իրաւունքը, այս պատճառաւ շատ տեղեր չտոկալով իրենց դեմ ի գործ դրուած ապօրեն միջոցներուն, գիւղացին ստիպուած է կամովին թողուլ իր հողերն, որոնք տոկոս առ տոկոս կանցնեն թուրքերուն կամ քիւրտ աղաներուն ձեռքը, որոնք մէկ մէկ ապարանք (քէօշք) շինելով գիւղերուն մէջ տիրացած են անոնց հողերուն:

Այսպէս հայ գիւղացին պարտքի տակ ընկճուած - պարտքեր որոնցմէ չազատեր – կը զրկուի իր հողերէն, զորս կը գրաւուեն իր անողորմ պահանջատէրեր:

2. <u>Երկրագործին վիճակը</u>

Գիւղացին տնտեսական այս աննպաստ պայմաններում մէջ իր վարուցանքէն օրապահիկն անգամ չապահովէր, արդեն գիւղատնտեսութիւն ըսածը գոյութիւն չունի, այգեգործութիւնը խիստ ետ մնացած է և եթէ մասամբ մշակէ ալ արտադրութեան արժէքէն աւելի տուրք պիտի ստիպուի վճարել միալթէզիմին: Մշակութեան նման անասնաբուծութիւնն ալ չքաջալերուիլ, եթէ գիւղացին յաջողի անասնոց թիւը շատցնելով օգտուիլ անոնցմէ, քիչ միջոցի մէջ կամ յափշտակութեամբ կամ ապօրէն տուրքերի գանձումով կը զրկուի անոնցմէ: Երկրագործը տարապարհակ աշխատութիւններով կըվատնէ իր ժամանակը միալթէզիմին[3]: Գիւղի աղային կամ քիւրտ պէյին, որոնց պարտաւորուած է ստրկաբար և առանց փոխարինութեան ծառայել, իւր զաւակի բերանեն կտրել և զանոնք ձրի կերակրել, վերջապէս երկրագործի տնտեսական կեանքը քայքայուած է, այնպէս որ եթէ երկար շունչ մը չառնի դարմանելու համար զայն սուղ ժամանակի մէջ անպատճառ կը փճանայ.

3. <u>Հարկեր</u>

Ժողովուրդ մը պարտական է իր տիրող պետութեան տուրքերն հատուցանել օրինական սահմանի մէջ և ստանալ ընկալագիրը սակայն զեղծ հարկահաւաքները և հաշուակալները գանձուած դրոց երեք չորրորդը կը խորին և չեն արձանագրեր կառավարութեան տօմարներուն մէջ և ոչ ալ կանոնաւոր ընկալագիր կուտան: Այսպէս, նույն պաշարները կերած կաշառքներ և խորած գումարները տարուէ տարի կը բարձուին ժողովուրդուն վրայ, որ սա չքաւորութեան կը պարտաւորի գաղթել: Հետևեալ տարին գաղթողներու տուրքը մնացածներէն բռնի կառնուի, ասոր համար գիւղացիկ կը պարտաւորի թուրք կամ քիւրտ աղային դիմել և անկէ մանր տոկոսներով դրամ առնել, զորս որոշեալ պայմանաժամին վճարել չկրնալով մարապան կը լինի, իր լուծքն ու հողերը դնելով անոր տրամադրութեան տակ, և այսպէս, տարուէ տարի իր պարտքերը շատանալով հողերն ալ, անասուններն ալ կը գրաւուին աղային կողմէ: Տուրքերուն երեսէն այսօր հարիւրաւոր թուրքեր և քիւրտեր դրամատէրեր

[3] Միալթէզիմ (թրք. mültezim)-հարկահավաք:

եղած են շնորհիւ հայոց սեփական կալուածներուն: Հարկերուն տեսակներն են.

1. Տասանորդական տուրք
2. Զինուորական
3. Ոչխարի
4. Կենդանեաց (գոմէշի, եզի, ձիուն և այլ նոր հաստատուած)
5. Հողային (արազի)
6. Կալուածական (էմլաք)
7. Թէմաթթոյի[4]
8. Խճուղեաց շինուք (մէշէ)

Այս և ուրիշ տուրքեր, ժողովրդի ընդհանուր թշուառութեան միջոցներուն իսկ նորանոր յաւելումներ կը կրեն

4. Հարկահաւաքութիւն

Մինչև նախորդ տարի ոստիկաններ ու զինուորները կը հաւաքէին տուրքերն, հիմայ հատուկ հարկահաւաքիչներ նշանակուած են, տարբերութիւնը սա է որ ձևը փոխուած է սակայն գեղծումները նորէն կը մնան: Հարկահաւաքը որոշումին գլուխն անցնելուն պէս կսկսի իր ապօրեն արարքները, երբ գիւղն կերթայ, տակաւին ձիէն վար չիջած գիւղապետն, գրագիրը և զզիրը, որոնք պատրաստ են իր մէն մի ակնարկեն չարաչար կը գանակոծէ ահաբեկելու համար գիւղը և ուզածն ընել տալու: Անմիջապէս իջևան և անկողին կը պատրաստուի իրեն և հետևորդներուն ձիերուն առատ առատ յարդ, խոտ, գարի, հոգ չէ թէ սպառած ըլլան և չգտնուին գիւղը, պարտաւոր է հիւրընկալը նույն իսկ իր ալիւրը, պլղուրը պարէնը գիւղէ գիւղ տանել և յարդ, գարի գնել բերել անոնց ձիերուն, յետոյ վայ այն հիւրընկալին որ իրենց ուզած համարում կերակուրներ և զանազան պէտքերը չը կատարէ նույն հետոյն առհասարակ անոնց կերածը հաւի միս, հաւկիթ և իւղեղեն կերակուրներ են առատ առատ, սպասաւորը պէքճին[5] որ գիւղէնէ ամբողջ 24 ժամ գիշեր ցորեկ պատրաստ է անոնց հրամաններուն, իրենց բնակած գիղեն վառելիքը, ճրագլուսը ամբողջ գիւղէն կը տրուի ձրի, որչափ որ մնան նույն գիւղը: Պահ մը հանգստանալէ ետքը, կարգը կուգայ դրամի գանձման ըստ հաճոյ մեծ գումարի մը կը պահանջեն գիւղէն և այնուհետև կսկսի պատիքներու կարգը, տանց գլխաւորները կը բանտարկէն, այր չեղած տեղը՝ կնիկները, հարսներն ալ կբերէն կը բանտարկեն, բերաններն աղբ կը լեցնէն. կը թքնէն, ձմեռ ատեն ըլլայ կամ գարուն կը մերկացնէն, վրաննին պաղ ջուր կը լցնէն և կը ծեծեն, շատ անգամ կանանց պատիւը կը բռնաբարեն և վերջապէս անլուր հայհոյութիւններ թափելով, կրոնք, խաչ, պատարագ, սրբութիւն հայհոյելով ուզած գումարը ձեռք կը բերեն, անոր մեջէն ըստ հաճոյս գումար մը իբրև կաշառք կը վերցնեն ամէն մէկ ոստիկանին ալ մէկ մէկ երկու երկու զույգ գուլպայ կստանան: Մնացեալ գումարէն ալ շատ անգամ առանց ընկալագիր մը տալու կը մեկնեն գիւղէն: Եթե լինի որ մէկը համարձակի ըսել թէ ինչու ապօրէն կը գործէք, անոր ալ ֆէտպի (յեղափոխական) անունը կը տան և խեղճ մարդը եթե չյաջողի փախչել, իբրև քաղաքական յանցաւոր բանտը կառաջնորդուի: Շատ անգամ խեղճ գիւղացին կըսէ, կաղաղակէ. Էֆենդի ահա իմ էլմախապէրս, ինձի տուրք չէ մնացեր, տուրքը լմնցեր եմ, աս ի՞նչ կուզուի, բայց լսողը ո՞վ. «վէր, սօրմա»[6] սովորական պատասխանը կառնէ և ճարահատեալ, նորէն, ծանր պարտքերով կը գտնէ, կու տայ, ալ ու՞ր կերթայ, որու՞ կոկորդը կանգնի, ոչ ոք գիտէ: Հազիւ թէ հարկահաւաքը գիւղէն կը մեկնի. ահա ուրիշ խումբ մը ոստիկան 30-40-50 հեծեալ հարիւրապետի մը կամ միլազիմի մը առաջնորդութեամբ գիւղը կը մտնէ, խեղճ գիւղացին թուքը բերանին մէջ կը ցամքի, միայն ուտելով ըլլայ, չեն կրնայ գոհացնել վերոյիշեալ պատիժներու, սոսկալին իգործ կը դնեն տնէ տուն մտնելով ամաններ կը ջարդեն էրիկ մարդիկ առաջի կը փախչին, ձեռք ինկած կնիկներ կը ծեծեն, կը լկեն, անոնց սնտուկներն կը ջարդեն, միջի եղածը կը կողոպտեն և վերջապէս տան գլուխ մէկը թէ կին, թէ այր կը տանեն բանտարկեն և արտաքոյ կարգի խիստ մեծ գումար մը կը պահանջեն և եթէ գիւղացին նորանոր պարտքերով չյաջողի վճարել, գիւղին նախիրը կը տանեն, կառավարութեան կենտրոնը և չնչին գնով մը կը վաճառեն: Այսպիսի պարագաներուն, ոստիկաններն ալ ցածր պայմաններով դրամ կուտան ժողովուրդեն 10-15 դուրուշ քիլէ ցորեանը, կամ ոչխար մը, տաւար մը կառնեն չնչին արժէքով, այս եղանակու քանինիր դրամատէր դարձած են: Ամբողջ տարին այսպէս կշարունակուի, հարկահաւաքումը և դարձեալ վերջ չգայ: Շատ անգամ եղած է որ միևնույն գիւղին մէջ քանի մը տեսակ հարկահավաքներ գտնուած են, մէկն աշարի, միւսն ոչխարի տուրք կուզէ, մին զինուրական, մէկ ալ հողային տուրք, մէկը էմլաք, միւսը խճուղիաց շինութեան անունով տուրք կուզէ, միևնույն ատեն կը տեսնի որ ոմանք ալ հէվալէ[7] մը ձեռքներին այս ինչ կամ այն ինչ պաշտօնեի ամսականի անունով գանձումներ կընեն, ալ կրնայ մակագերուիլ թէ այսպէսի պարագաներուն թշուառ ժողովուրդը ինչ հոգեկան տագնապներ կանցունէ, հազար անգամ աւելի կուզէ մեռնել, քան այսպէս ամեն օր չարչարուիլ, անպատուիլ:

[4] Բառն անհասկանալի է:

[5] Պեքճի (թրք. bekçi)-պահակ:

[6] Վէր, սօրմա (թրք. Ver, sorma)-տու՛ր, մի հարցրու:

[7] Հէվալէ (թրք. havale)-դրամահավաքության վկայական:

5. Անասուններ, հաշուառած միջոցին գործուած զեղծումներ

Մինչև նախորդ տարին միայն ոչխարներէն տուրք կառնուիր, աղնամ[8] անունով տուրք մ է, որ աւելացել է եզի, գոմէշի, կովի, գրաստի և այլն անունայ տուրքն ալ: Ոչխար, տաւար համարող պաշտօնիայն այն որոշուածին պէս կը հաւաքէ իր ճորտերն և 50-80 հոգինոց խումբով մը գիւղերը կելնէ, ուտեստն ու պէտքեր արդէն ձրի են, դրամով առնել դա տարօրինակ է, գիւղ մը հասնելուն վեր ի վերոյ հաշիւ մը կընէ եթէ իրեն և հետնորդներուն կաշառք տրուեցաւ, քօչանները[9] կը լիցնէ և կերթայ: Հակառակ պարագային կրկնապատիկ կը նշանակէ ոչխարին թիւը, եղած բողոքները միշտ անլսելի կմնան, զի ոչխարի պաշտօնիայն պաշտպանեալ կամ ազգականն է այս ինչ կամ այն ինչ կառավարական պաշտոնէից: Ասոր ետևէն կը հասնի քննիչ պաշտոնիայն (թահգիգաթ) կաշառքի բաժին մ ալ ասիկա կ'ստանայ և քանի մ ալ ֆերաք, այսինքն պահուած ոչխար, տաւար նշանակելով կանցնի բան չունի թող երդում ընէ, աղաչէ, թէ իր ոչխարաց, տաւարաց թիւը այնքան չէ, աւելի գրած է. այս պաշտօնեայք իրենց հաշուէգործներն կառավարութեան տանելէ յետոյ հարկահաւաքներ կելնեն և տուրքը կը գանձեն:

6. Տասնորդան տրոց վաճառման և միլթէզիմի զեղծումներ

Տասնորդական տուրքը աճուրդով կը վաճառուի և զայն գնողներն, որոնք ընդհանրապէս թուրք երևելիներ և քիւրտ պէյեր կը լինեն միլթէզիմ կըսուին: Կառավարական կենտրոնին մէջ գիւղերը կը ծախուին մունետիկներու միջոցով: Եթէ ո և է գիւղի մը բնակիչներն համարձակեն գիւղի աշարն առնելու, միլթէզիմներն անմիջապէս խոսքը մէկ կընեն և այնքան կը բարձրացնեն արժեքը, որ գիւղացին կը պարտավորի տեղի տալ կամ արժեքէն անհամեմատ բարձր գնովն իւրացնել: Միւզթէզիմ գիւղի մը աշարն առնելէ ետքը այլևս ինքզինքը նույն գիւղի հողեն, ջրեն և բնակչութեան տէրն կը համարի և ամէն տեսակ զեղծումներ կը գործէ, զի վստահ է, թէ իր ազգականք, որ կառավարական պաշտոնեաներ են, ամէն պարագայի մէջ զինք պիտի պաշտպանեն մանաւանդ որ հակառակողը կրնայ ֆէտայի անունով մկրտել և լռեցնել: Ամբողջ վեց ամիս Միալթէզիմ մը առած գիւղը կը մնայ, իր ճորտերով, ծառաներով ու ձիերով հոն ձրիապէս կը վայելէ ամէն ինչ, բնակարան, անկողին, ծառայ, ուտելիք իրենց և ձիերուն, վառելիք ճրագլուս և ամէն ինչ գիւղեն կը տրուին: Կալերն ըստ օրենի փոխանակ ութէն մէկ չափելու (թեպէտ անունը տասնորդ է) այնպէս մը կը չափէ, որ կէս առ կէս կը նստեցնէ. Այլ և այլ անունով իրեն և հետևորդներուն առանձին առանձին բաժիններ ստանալով բերքերը կամբարի գիւղեն մէջ և վերջէ ի վերջոյ զանոնք ալ գիւղացիներու անասուններով ձրի փոխադրել կուտայ մինչև Մուշ կամ իր տունը ուր որ է: Գիւղացին ցորեանը յարտէն զատելուն պէս միլթէզիմը անմիջապէս ցորեանի շեղջը թուճ ըսած փայտէ դրօշմով կը դրօշմի և այնպէս օրերով առանց չափելու կը թողու մինչև որ իր առաջարկը ընդունել տայ, յետոյ կը չափէ, իսկ եթէ գիւղացին չգիջանի իր առաջարկին, կը թշնամանայ անոր հետ և խեղճին ցորեանը կը թողու կալին մէջ անձրևին տակ, մինչև որ գիշեր մը ինքը կամ իր ընկերները յաջողեն դրօշմը եղծել, այն պարագային խեղճ գիւղացին ամբողջ ցորեանը իրեն տայ ալ դարձեալ չազատեր ձեռքէն: Եթէ գիւղացին բանջար, ընդեղէն մշակած է կամ այգի ունի, անոնց աշարն ալ, հակառակ օրինաց, այնքան բարձր կը նշանակեն, որ ամբողջ արդյունքէն աւելի առաջ կուգայ, այս պատճառաւ գիւղացին յաջորդ տարին այլևս չմշակեր այդ կարգի բաներ: Ճիշտ միլթէզիմներու երեսէն բամբակի, շերամի, բրնձի և բաներու մշակութիւնը ետ մնացած է: Միլթէզիմ գիւղին մը մէջ ոտքի կառնուն հաստատելու ինքը, կօգտուի անոր նեղ վիճակէն, անոր ծանր պայմաններով դրամ փոխ կուտայ, կամ միրիպայ[10] կընէ և կամաց կամաց կը տիրանայ անոր հողին և եղած չեղածը ձեռքէն կառնե: Այսուհետև իսկապէս իրեն կը պատկանե գեղանի հարսը կամ աղջիկը: Հակառակողը իբրև ֆէտայի, քաղաքական յանցաւոր կամբաստանուի և բանտ կը դրուի: Վերջապէս հարկահաւաքներուն նման միլթէզիմն ալ պատուհասն եղած է երկրագործ դասին և ասոր ոսկորի ծուծն ալ քամեր է:

7. Օսմանեան օրէնքներն ու դատարանները

Արդարև ըսելիք չկայ օսմանեան օրէնքներու արդարութեան, բայց քանի որ չեն գործադրուիր, գոյութիւն չունեն մեզ համար, ծալլուած մէկ կողմ դրուած են, եթե խնդիրն հայուն համար է, կառավարական պաշտօնեայք զեղծումներով շաղախուած կաշառակերութեամբ կը վճարեն ո և է դատ մը, դատարաններու մէջ իսլամին և քրիստոնէին մէկ աչքով չնայուիր. հակառակ օրինաց տրամադրութեան, որ խնդիր չդներ ցեղի, կրօնքի, աղքատի և հարուստի միջև:

8. Վաճառականութեան դադրիլը

Տասը տարիներէ ի վեր է որ հայաբնակ գաւառները պաշարման մէջ են, երթևեկութիւնք ընդհատուած են քաղաքէ քաղաք, ոչ ոք կրնայ Պոլիս կամ արտասահման երթալ առուտուրի կամ աշխատանքի համար: Ժողովրդեան

[8] Աղնամ (թրք. Ağnam vergisi)-Մանր եղջերավոր անասունի հարկ:

[9] Քոչան (թրք. koçan)-վկայական:

[10] Անընթեռնելի:

աղքատութեան և տնտեսապէս ինկնալուն գլխաւոր մի պատճաւն ալ վաճառականութեան և յարաբերութեանց արգելքներն են:

9. Պանդուխտներ

Կ. Պոլիս կամ ուրիշ քաղաքներ և արտասահման գտնուած բազմաթիվ պանդուխտները այս քանի տարուան միջոցներուն տրուած արգելքներու պատճառով չեն կարող վերադառնալ իրենց ծննդավայրը, որով ասոնք իրենց գտնուած օտար երկիրներու մէջ և իրենց ընտանիքներն ալ գիւղերուն մէջ կը չքանան:

10. Առանձնաշնորհումներ

Եկեղեցական, տոհմային, լեզուային առանձնաշնորհումներ ունեցած ենք դարերէ հետէ որոնց շնորհիւ կարողացած ենք պահել մեր ազգային գոյությունը, սակայն, այդ առանձնաշնորհումներն մէկիկ մէկիկ կը բարձուին: Մեր տարևոր վանքեր, մենաստանները, մատուռները կը քանդուին կամ կը չքանան, ի հնուց անդի սահմանուած և նուիրագործուած թեմական և ուխտաւորական հասույթներու հաւաքման արգելումով: Առաջնորդներ, վանահայրեր կամ փոխանորդները, որոնք ներկայացուցիչներ են ժողովրդական, իրենց հեղինակութիւնն ու ձայնը չունին կառավարութեանց մոտ, ձևական դարձեր է անոնց ներկայութիւնը և միմիայն կառաւարութեան պետքի համար կը փնտռուին: Մեր վարժարանաց մէջ տոհմային ուսումն ևս սահմանափակ և ազատ կրկնութեան չտրուի իր ուսանող մանուկներուն:

11.Դավանափոխութիւն և առևանգութիւն

Բռնության, աղքատության և պանդխտության պատճառով ամեն տարի շատ մը կույս աղջիկներ և կիներ կառևանգուին և կը թրքանան, այդ առթիւ առաջարկներու կամ փոխանորդներու օրինական միամտութիւնը կամ դիմումը միշտ ապարդիւն մնացած է և օրինաց գործադրությունը բռնութեան տեղի տուած է:

12.Քիւրտ աշիրէթներ

Այս կիսավայրենի ցեղերուն բարբարոսական արարքներն արդէն մանրածանորեն, երկրի ամենավտանգավոր տարրերն համարուած են միշտ: Կորուստ, կողոպուտ, յափշտակութիւն, սպանութիւն անոնց սովորական արհեստն եղած է սկզբեն ի վեր և հայը ո՛չ մի ժամանակ կրցած է հանգիստ վայելել ասոնց երեսին: Հիմայ ալ ատոնց մի մասը կանոնաւոր զէնքերով զինեալ հեծելագունդ մը կը կազմէ և արձակ համարձակ ամեն չարագործություն կընէ:

13.Տարապարհակ աշխատութիւնք

Մզկիթներու, հասարակաց շէնքերու շինութեանց, զինուորական փոխադրութեանց և ուրիշ ծառայութեանց համար հայերն իրենց գրաստներով ու անասուններով միշտ ստրկաբար գործածուած են ասոնց փոխարինութեան և այդ մատուցած ծառայութիւններն վարձատրուած են լուտանքներով, հայհոյութիւններով և ծեծով:

14.Քաղաքական յանցաւորներ

Այս անուան ներքև կը դատապարտուեն այն ամէն հայեր որոնք կը համարձակեն արդարութիւն և իրաւունք պաշտպանելու ելնել և երկրին մէջ գործուած զեղծումներուն դէմ բողոքել, շատերն ալ ձրիապէս զրպարտուած են, ոստիկան մը միլթէզիմ մը պաշտօնի և աստիճանի թեկնածու մը կրնայ յերիւրանքի մը ստեղծել և հայն իբրև յեղափոխական կամ քաղաքական յանցաւոր ամբաստանել տալ, ենթակայն բան գործ չունի, թող արդարացնի զինքը: Դրամն ու միմայն դրամն է իր փրկութեան միջոցը, եթե առատ կրցավ տալ կաշառք, հակառակ պարագային կենթարկուի բանտային տանջանքներուն: Այս կերպով քանի քանի ընտանիքներ փճացան ու փճանալու վրա են:

15.Բանտերու վիճակը

Թուրքիոյ բանտերը մէկ մէկ սպանդարաններ են քաղաքական յանցանքով ամբաստանուած հայուն համար, տրուած տեսակ տեսակ տանջանքները աննկարագրելի են: Ծեծ, անողոքութիւն, հրաշեկ երկաթներով մարմին խարելը, ատամներ քաշել, ընչացք փետտել, կոյանոցներու մէջ գլխիվայր կախել, գիլարաններու մէջ մարմինը պրկել, մաշիլ և այլն սովորական են: Դժբաղտ ենթակայք ասոնց չկրնալով դիմանալ շատ անգամ մեռած են, շատերն ալ մեռնելէ ազատելու համար իրենց նման անմեղ մը բերան տալու յուսահատ միջոցին դիմած են արդարութեան ու բանտային պաշտոնէից նոր որս մ ավելցնելով:

16.Բռնի կամ կեղծ հանրագրութիւնք:

Մեծ պետութեանց կնքած Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին տրամադրութեանց հակառակ հայերու նկատմամբ ի գործ դրուած վերոյիշեալ հարստահարութիւնք և ոճիրներ սքողելու կամ ստելու համար տեղական կառաւարութիւնք կը փութան անմիջապէս կեղծ հանրագրութիւններ կամ գոհունակութեան գրեր պատրաստել և ստորագրել տալ պաշտօնական մարմիններուն և երևելիներուն ճնշումի ու բռնութեան ներքո և ներկայացնել ուր որ անկէ և ապա հրատարակել թէ՝ «երկիրը խաղաղ և անդորր է» (Մուսայիլ պէյ Քէմալ տըր) սովորական բանաձևը կրկնելով: Վայ ստորագրութիւն չդնող հայուն, ինչ աստիճանի ու դիրքի տեր ալ լինի, անոր գլխուն աներևակայելի պատիժներ ու փորձանքներ անպակաս են:

17.Զենք կրելու առանձնաշնորհում

Քիւրտեր ու թուրքեր կանոնաւոր թէ անկանոն զենք կրելու արտոնութիւն կը վայելեն, բայց հայ մը եթէ ո և է զենք իր քով ունենայ, երեք տարուան բանտարկութեան կը դատապարտուի, ասոր հետևանքն եղած է կենաց և

ընչից անապահովութիւն: Շնորհիվ այդ արտոնութեան քրտերը մի քանի տարի է որ սովորութիւն ըրած են իրենց վրեժխնդրութեան կամ ո և է առթիվ թշնամութեան առարկայ եղող հայ գիւղին մօտերը հրացան արձակել և տարածայնել թէ այս գիւղին մէջ յեղափոխական կը գործուի: Մօտակայ քրտէր խառն բազմութեամբ կը յարձակեն նույն գիւղին վրայ, կը կողոպտեն և ամեն տեսակ բռնաբարութիւններ ի գործ կդնեն և գիւղը ամայանելէ յետոյ կը մեկնեն: Այսպէս ըրավ Շիպրանցի Մեջիրէթէն հեծելազորաց դասակարգին պատկանող Շէշօ անունով քիւրտը, որ ամսոյս 12-ին, իր հետևորդներով յարձակեցաւ Տէրըք անուն հայաբնակ գիւղին վրայ և հրացան արձակեց: Ասոր վրայ Ավրան գիւղը գտնուող կանոնաւոր զօրքը Տէրըք կը փութայ գտնուող օգնութեան: Շիշօն սակայն խաբած էր զիրինք, վասնզի յեղափոխական մը չտեսնուիր հոն: Այս անակնկալ յարձակման վրայ գիւղին բնակիչները իրենց անձը ազատելու համար ի փախուստ կը դիմեն: Շիշօն գիւղի բոլոր անասունները և գույքերը կը կողոպտէ և վերջին տուներն ալ այրելով կը հեռանայ: Այսպես քիւրտերը զինեալ և խումբ խումբ շարունակ դաշտերը կը պտտեն և իրենց հանդիպող հայը կսպանեն և երբ կառավարութիւն դիմում ըլլայ, յանցանքը յեղափոխութեան վրայ կը բարձուի: Ահա այս կերպով երթևեկութիւնք, յարաբերութիւնք վտանգաւոր դարձած են և ամեն ինչ յեղափոխականին կը վերագրուին:

18.<u>Կոտորածներ</u>

Թրքութիւնը կարծես բաւական չհամարելով վերոհիշեալ հարստահարութիւնները, հետամուտ է միշտ բնաջինջ ընել հայն: Ասոր ապացույց են 1894-ին Սասուն Տալորիկի և 1895-ին բոլոր հայաբնակ գավառներու ընդհանուր կոտորածները, 1896-ին Ակնայ Թոքատի, Վանայ և մասնաւոր կոտորածները, 1900-ին Սասնոյ Զբաղանք գիւղի մոխիր դառնալը ձեռամբ հրամանատար Ալի փաշային, այս տարի ալ Մշոյ Յունան, Բերդակ, Մկրագոմ, Դրմիրտ և Տէրըք գիւղերն անբնակ ու աւերակ դարձած են, բոլորովին բնաջինջ եղող Սասուն-Տալորիկի դժբախտ հայերուն հետ:

Մեր առած տեղեկութեանց նայելով հետևյալ պարագաներու տակ տեղի ունեցեր է Սասուն-Տալորիկի այս վերջին կոտորածը:

Բաղշոյ կուսակալ Ֆէրիտ պէյն և հրամանատար Սալիհ փաշաներն իրենց հետ առնելով Բաղեշի և Մուշի հոգևոր պետերն և քաղաքական ժողովոյ աշխարհական անդամներն, ինչպես նաև Ս. Հովհաննես վանքի Առաքել վարդապետն, վեց վաշտ (թոպոր) զօրքերով և վեց թնդանոթներով Սասուն կը բարձրանան անցեալ ապրիլ 10-ին այս կողմէն, ուրիշ յոթը վաշտ զօրքեր ալ զինուորական պատրաստութեամբ Խարբերդէն և Տիգրանակերտէն կը հասնին և կը բարձրանան Սասուն, Տալորիկի և Իշինձորի կողմէն, այն է Սասնոյ հարաւային գծով: Հետհետէ կուգան և կը պաշարեն Սասուն-Տալորիկը, աստիէն ու անտիէն, այլևայլ քիւրտ բազմաթիւ ու կատաղի աշիրէթներ, որք ինչ <u>Սօլախցի</u>, <u>Զբթեցի</u>, <u>Օմէրանցի</u>, <u>Խամարանցի</u>, <u>Պատրքանցի</u>, <u>Հվիտանցի</u>, <u>Խուլբեցի</u>, <u>Խիանցի</u>, <u>Բագրանցի</u>, <u>Շէխտուրանցի</u>, <u>Դրշրօթանցի</u>, <u>Սլեվանցի</u>, <u>Պշրեցի</u>, <u>Փնենարցի</u>, <u>Հրթմանցի</u>, <u>Մօտրկցի</u>, <u>Մուսեցի</u>, <u>Սարմցի</u>, <u>Զէլալցի</u>, <u>Մալա-Շէկօ</u>, <u>Բդրեցի</u> (Հաճի-ֆէրօ ըսուած Զարագործին պատկանող, որ խաղաղութեան ատեն իսկ, հետզհետէ 50 հայեր սպանել տուած է դաշտին մէջ), <u>Խութեցի</u> (հռչակաւոր Մուսա պէկին պատկանող), <u>Ալմանցի</u> և <u>Սէյրանցի</u> ըսուած աշիրէթներն, Թել գիւղի Շէյխերն իրենց խումբերով և Մուշ քաղաքի թուրք խուժանը ահագին բազմութեամբ:

Կառավարութիւնը երկու տարիէ ի վեր միջոցներ կը խորհեր Սասնոյ հայերը վար իջեցնել և անոնց տեղը քիւրտ ցեղեր կամ թուրք գաղթականներ լեցնել, բայց չէր յաջողեր: Այս տարի փոխանակ այդ միջոցին դիմելու, Սասունն իսպառ ջնջելու ծրագիրն յղացավ և գուցէ նկատելով որ քաղաքականութիւնն ալ իրեն նպաստաւոր է, տակաւին գարուն չբացուած ձեռնարկեց իր ծրագրի ահաւոր գործադրութիւն: Եւ որպեսզի Սասունը յանկարծակիի բերի, մէկ կողմէն յիշիալ Առաքել վարդապետ վեց ժամ պայմանաժամով պատուիրակ կը ղրկէ Սասունցիներու մոտ հարկ եղած գթութիւններով, միւս կողմէն զօրքերը թնդանոթներով դեպի Սասունցիները կը յառաջանան, մինչ անոնք գրաւոր պատասխան խմբագրելու զբաղված կըլլան, որ այլևս կեսկատար կըմնայ և Առաքել վարդապետ հազիւհազ ողջ Ֆէրիտ պէյի մոտ կը հասնի: Թնդանոթները կորոտան, սոսկալի կռիւ կսկսէ և կըտևէ մինչև երեկոյ, արդիւնքն երկուստեք անյայտ: Զօրաց յարձակումն, առանց Սասունցիներու պատասխանին սպասելու, ապացույց է թէ Առաքել վարդապետի պատուիրակութիւնը պարզ ձևարկերպութիւն մ էր:

Ապրիլի 13-ին կուսակալ պէյի հրամանով մեր ետևէն եկող հարիւրապետի մը և քանի ոստիկաններու հետ վանքէն մեկնելով 14-ին լիւսը Ֆէրիտ պէյի մոտ հասանք Ստեփան վարդապետին հետ: Քանի օր վերջը տեսնուեցավ, որ թնդանօթները կը զետեղէին Կրէ-քօլ ըսուած բլուրին առջև: Կուսակալն, հրամանատարն և սպայակույտին մի անդամը Ալայ պէյին հետ գնացին թնդանօթներու դիրքերը հետազօտել: Ապրիլի 21 էն 22 լուսանալու գիշերը ժամը 7-ին ատենները, զինուորները շարժման մէջ դրուեցան, բոլոր աշարեթներու ձեռքը կանոնաւոր զենք տրուած էր, վեց վաշտ զօրքեր

թնդանօթներով և աշարեթներու ահագին բազմութեամբ դեռ արև չծագած, միահամուռ յարձակեցան նախ Չայ բլուրին և ապա Կրէ-քօլին վրայ և բաւական ատեն բուռն թնդանօթաձգութեամբ և հրանաձգութիւնէ մը ետքը տիրեցին բլուրին բարձունքներուն, ուրկէ սասունցիները տեղի տուած էին, այդ օրէն սկսէալ շարունակ թնդանօթներ որոտացին և սոսկալի կռիւը շարունակեցաւ գիշեր ցերեկ մինչև 23-րդ օրը: Նոյն քանակ յարձակումներ ալ միևնույն ատեն Տալորիկի և Իշխնձորի կող մէն կըլլային սասունցիներու վրայ: Վերջապէս ապրիլի 23-ին սասունցիներ փախուստ կուտան, թնդանօթներու և զօրաց ու քիւրտ աշիրէթի անհամեմատ մեծ բազմութեան գնդակներու տեղատարափեն չտօկալով, ուստի իրենց վերջին ապաւէնն եղող կէլի գիւղը կը գրաւուի օսմ. զօրքերէն, ժողովուրդի պաշարով, ինչքերով ու գոյքերով: Արդեն քանի օր յառաջ ալ գրաւուած էր Իշխնձոր ըսուած գիւղը, որ Սասնոյ հարաւային անցքը փակող կիրճն համարուած էր: Այսպէս չորս կողմէն զօրքերն ու աշիրէթները կը մտնին Սասուն-Տալորիկի մէջ և ջարդը կըսկսի մինչև մայիս 4: Ժողովուրդը կը փախչէ, բայց ամէն կողմ հրացանի գնդակի ու սուրի կը մատնուի, ականատեսէ մը հաւաստի աղբիւրներէ կը քաղենք խիստ սրտաճմլիկ անցքեր, ժողովրդեան այն մասը, որ կապաստանե իրենց դրացի աշիրէթներուն, խաբուելով անոնց ստապատիր խոստումներէն, բոլորովին սրի կանցուին և կը նետուին Տալորիկէն անցնող գետին մէջ: 12 տարեկան կույս աղջիկներու և գեղանի կիներու պատիւը կը բռնաբարեն և կառևանգեն: Այս պարագային է, որ հոս-հոն ապաստանող կանանց և մանր տղոց մի մասը կյաջողեն հետզհետէ Մուշ փախչել և մի մասն ալ կերթայ գիւղեն և կուսակալ պէյին անձնատուր կլլայ:

Տալորիկի կոտորածն աւելի սաստիկ կը լինի, բոլոր մանր տղաներ ողջ ողջ գետը նետուած են, քիւրտերը խաբեութեամբ կամուրջը նորոգել կուտան տալորիկցիներուն և վերջիններուն երդում կընեն չը վնասել իրենց կանանց ու զաւակաց և կը խոստանան իրենց բոլոր անասուններն ալ պահել և յետոյ իրենց վերադարձնել: Տալորիկցիք կը հաւատան, իրենց կանայք և մանր զաւակները և անասունները կամուրջէն անդին կանցնեն, քիւրտերը կը դրժեն իրենց երդման, անասունները կը գրաւեն, և ընտանիքները կը կոտորէն, և գետը կը նետէն: Անտոք լեռան աջ բազուկին մը կուշտը քարաժայռի մը տակ գտնուած են 12 տղայոց դիակներ՝ անօրէն քրդոց զոհ եղած: Բայց ատոնցմէ միայն կոկորդը կտրուած չլինելուն, տակաւին ողջ եղերէ և կրցերէ պատասխանել անցորդի մը հարցման, թէ «որու՞ տղան իս» - Կարապետին, «ո՞ր գիւղէն ես»,-չը կրնար պատասխանել և հոգին կաւանդէ:

Քանի մը քայլ անդին նույն անցորդը կը հանդիպի հայու մը և կնոջ մը դիակներուն, առաջինը վառօդով նետուած և միւսը յօղյօղ եղած: Սասունցի իգական սեռը իր պատիւեն խիստ նախանձախնդիր է: Ասոր փորձը ցույց տուած էր առաջին կոտորածի ժամանակը, այս անգամ ալ, երբ խումբ մը կանայք ու աղջիկներ յանկարծ կը պատահեն զօրքերուն ու աշիրէթներուն, իրենց պատիւը պահելու համար կը նետուին յորձանուտ գետին ալիքներու գիրկը և կը մեռնեն դիւցազնաբար: Մայիսի 4-րդ օրը տեղի կունենայ այն սոսկալի ջարդը, որ ամենէն աղէտալին և արիւնահեղ կըլլայ, ծրագիրն այպէս կը կազմուի: Անտօքի կոտորածներէն սկսեալ 6 ժամ երկայնութեամբ և 4 ժամ լայնութեամբ զինուորական պաշարման շղթայ մը կը կազմուի և վերոյիշեալ աշիրէթներու բազմութեամբ: Այդ շղթան հետզհետէ ամփոփելով որսը բռնելու ու չփախցնելու ճարպիկութեամբ մը ամէն ծակ ու ծուկ խուզարկելու համար ամէն անոնք ըլլայ մարդ, կին, երեխայ, որ ձեռք կանցնի, անխնայ կկոտորեն, գաւառը ամայի ու անապատ կը դարձունին: Բարբարոսական կարգադրութեամբ մը թնդանօթը ամեն կողմեր կըպտտցնին և ուր որ հալածական ժողովրդի խումբ մը տեսնուի, ռումբերու տարափներով կը ջնջուի:

Ահա ցանկը Սասնոյ կոտորածին հետևանքով աւերակ եղած գիւղերուն. 1. Կըլիէկուզան իր ութը թաղերով, 2. Իշխնձոր, 3. Արտկունք, 4. Հեղին, 5. Ընկուզնակ, 6. Սևիթ, 7. Մէզրէն, 8. Հըլօղինք, 9. Տալորիկ, 10. Դուալինք, 11. Հազմանք, 12. Արտիու, 13. Քօրախու, 14. Վերին գիւղը, 15. Խուլիովիտ, 16. Փուրի, 17. Հօսնուտ, 18. Յարդի, 19. Զբաղանք, 20. Զորեր, 21. Եղկարդ, 22. Քարավանք, 23. Քրդամանք, 24. Խոծոծվանք, 25. Խըտան, 26. Աղբի, 27. Հիթենք, 28. Կէրմա, 29. Քօփ, 30. Գեղուշէն, 31. Շուշնամերկ, 32. Սէմալ, 33. Շէնըք, 34. Կըլիէ Կընըման, 35. Կըլիե մըսուր, 36. Երիցանկ, 37. Տափրկ, 38. Ալիանցիկ: Գիւղեր կան որ բնակիչներու մէկ աննշան մասը միայն կրցած է ազատուիլ հալածական, վիրաւոր, հիւանդագին Մուշ հասնելով: Գիւղեր ալ կան, որոնց բնակիչներու գոյութեան վրայ բնաւ տեղեկութիւներ չկան: Բազմաթիւ ընտանիքներ ու գերդաստաններ կան, որ բոլորվին ջնջուած են և նմուշ մը իսկ չէ կրցած խալըսիլ ո՛չ կին, և ո՛չ այր, և ո՛չ տղայ: Ամէնէն աւելի երկարատև և զարհուրելի ջարդին ենթակայ եղածեն Տալորիկի և անոր շրջակայ գիւղերու դժբաղդ ժողովուրդը, որ ամէն կողմէ պաշարուած և փախուստի ամէն ճամբաններէ զրկուած ըլլալով, թէ՛ զինուորներու, և թէ՛ քիւրտերու կողմէ խժդժաբար ջարդուած են ու մարմինները յօշոտուելով գետին մէջ թափուած: Շատեր, որ կեանքերնին ազատելու համար

զանազան տեղեր թագստոցներ մտածէին, օրերով անօթի և անսնունդ տառապեին, իրենց սնունդ եղած է մէկ մէկ ափ կորեկի ալիւր, որ, սակայն, շուտով սպառած և անկէ վերջ, երբ անօթութիւնը դուրս բերած է զիրենք թագստոցներէն, մատնուած են իսլամական սրին ու կրակին: Ինչպէս ցաւօք կը տեսնուի, թուրք կառաւարութիւնը գոհ չեղաւ միայն Սասունք փճացումով, հիմայ իւր անողոք ուշադրութիւնն սկսած է Մշոյ դաշտին վրայ, ուր փոխադրուցեան արիւնահեղութեան և աւերութեան թատը, որպէսզի մեր գոյութեան ամենէն անդարմանելի հարուածը յաջողի տալ: Այսքան արագ և անագուրոյն փճացումի դէմ, եթե եւրոպայի մարդ ասէր ու բարեկարգիչ ձեռքը չերկարե մեզի, արդարո ինքզինքնիս կորած պետքէ համարենք:

Հակառակ այն չարախոսութեան, որով կամբաստանեն զմեզ թուրք իշխանութիւններ, ըսելով, թէ հայերը անկախ ըլլալ կը ձգտուին, բացարձակապէս կրնանք յայտարարել, թէ մեր ժողովուրդը իւր գոյութեան իրաւունքը պաշտպանելու համար միայն կանոնավոր և ապահով բարեկարգութեանց կարօտ կզգայ զինքը, առանց որոյ հայուն համար կեանք չկայ: Այս անհրաժեշտ բարենորգումներին՝ բարեփոխումն տուրքերու արդի ճնշող դրութեան, ջնջումն տասնորդական և զինուորական տուրքերու, վերջինի փոխարեն միլիցիայի հաստատութիւն, գիւղերը պահպանել բաւարար և զօրաւոր պահապաններով, և միւս կողմէ զինաթափ ընել ոչ զինուորական իսլամ տարրերն, մանաւանդ համիտիէ ըսած քիւրտերը, վերադարձնում հողային ամէն տեսակ կալուածներու, որ քանի գրաուած են հայերէ, դատարանական ճշմարիտ բարենորոգումներ, անցագիր և տեղափոխութեան արտոնութեան վերադարձ հայ գաղթականներու և պանդուխտներու, ազատութիւն բոլոր քաղաքական յանցանքով բռնուածներու և պատասխանատու ընդհանուր հսկողի մը անուանումն հայոց բնակած գաւառներու համար՝ եւրոպական պետութեանց հսկողութեան ներքո: Այլևս առանց այս կերպ բարեկարգութեան մը անկարելի է, որ հայ ժողովուրդը կարենայ ապրել և շարունակել իւր տառապեալ գոյությունը:

Վսեմ Տէր, այս պարզ ու համեստ խընդրանքները դարման բերին մեր ընդհանուր հարստահարութեանց և կոտորածներուն, եթէ տակաւին յապաղեն անոնց գործադրութեամբ հայերու վրայ ի գործ դրուած ազգասպան ծրագրին հետևանքով, քիչ ատենէն հայը պատմական ազգերու շարքը պիտի դասուի, ուստի մարդասէրն Եւրոպայի գթութիւնը կը հայցենք:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Փափազյան Ա.,** Ոչ թուրք ազգերի իրավազուրկ վիճակը Օսմանյան կայսրությունում և թանզիմաթը: // «Արևելագիտության հարցեր»: - Երևան, 1983, պրակ. 1-2
2. **Սրվանձտեանց Գ.,** Թորոս Աղբար, մասն Ա: - Կ. Պոլիս, 1879
3. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Ա. Փափազյանի խմբագրությամբ: - Ե, 1988
4. **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,** Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան: Հ. 3: - Եր., 1991
5. Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 412, ց. 1, գ. 1857

Сдана/Հանձնվել է՝ 14.07.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.07.2020
Принята/Ընդունվել է՝ 20.07.2020